ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ՎԱՀԱԳՆԻ

ՄՍԻ ԵՎ ՄՍԱՄԹԵՐՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ (ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2017

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանում:

Գիտական ղեկավար — տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ԿՈՐՅՈՒՆ ԱՇՈՏԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ — տնտեսագիտության դոկտոր, ՀՐԱՉՅԱ ՍԵՐԳԵՅԻ ԾՊՆԵՑՅԱՆ

տնտեսագիտության թեկնածու, ՄԱՐԻԱՆՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Առաջատար կազմակերպություն — ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2017 թվականի սեպտեմբերի 12-ին, ժամը 14^{00}-ին՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի տնտեսագիտության 002 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0009, Երևան, Տերյան փող., 74:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2017 թվականի հուլիսի 17-ին:

002 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ, ԴՈՑԵՆՏ — Վ. Ս. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Հետազոտության թեմայի արդիականությունն ու հրատապությունը</u>: Մսի արտադրությունը պարենային անվտանգության կարևոր բաղադրիչներից է, իսկ մսի և մսամթերքի սպառումը՝ բնակչության բարեկեցությունն ու սննդի լիարժեքությունը բնութագրող ցուցիչներից մեկը: Մսին բաժին է ընկնում անասնաբուծության համախառն արտադրանքի 59.2%-ը (217.5 մլրդ. դրամ) և բնակչության սպառողական ծախսերի 10.5%-ը (161.1 մլրդ. դրամ)[1]:

Վերջին տասնամյակում ՀՀ-ում բնակչության եկամուտների եռապատկմանը զուգընթաց՝ տարեցտարի մեծանում է մսի և մսամթերքի նկատմամբ պահանջարկը, ինչն ակներև է դրանց վրա կատարած ծախսերի 60.8 մլրդ. դրամ (60.6%), մսի և մսամթերքի ապրանքաշրջանառության ծավալների 9.6 մլրդ. դրամ (10.7%) և համախառն սպառման 58.8 հազ. տոննա (64%) աճից[2,3]: 2005-2015թթ. մսի և մսամթերքի արտադրության ծավալների համապատասխանաբար 44.4 (79.3%) և 3.9 հազ. տոննա աճի (2.5 անգամ) ձեռքբերումներին զուգահեռ, շուկան համալրվում է անհայտ ծագման և անհուսալի, էներգետիկ արժեքավորության, էկոլոգիական մաքրության և որակական այլ չափորոշիչներով տեղական մսին էապես զիջող 52.6 և 9.4 հազ. տոննա մսով և մսամթերքով[4,5]: Պարենային անվտանգության ապահովման և տեղական արտադրության զարգացման գերակայությունը վերահաստատում է ներկրումների այլընտրանքի անհեռանկարայնությունը: Այդուհանդերձ, արտաքին կախվածության սպառնալիքի դիմագրավման համար լուծված չեն մի շարք հիմնարար հարցեր, որոնցից առավել ծանրակշիռ են բնական կերահանդակների արտադրողական ներուժի օգտագործման և անասնաբուծության վարման գիտական համակարգի ներդրման անբավարարությունը, մսամթերք արտադրող ձեռնարկությունների արտադրական հզորությունների 87.1%-ի թերբեռնվածությունը, մսի շուկայում համահավասար մրցակցային դաշտի կայացման անհրաժեշտությունը, միս և մսամթերք արտադրողների միջև արդյունավետ փոխհարաբերությունների ձևաչափի բացակայությունը, գյուղացիական տնտեսությունների արտադրության ցածր արդյունավետությունն ու ընդլայնված վերարտադրության միջոցների սակավությունը և այլն: Արդի ժամանակաշրջանում մսամթերային ենթահամալիրի զարգացման ռազմավարական դիրքերից թերևս առաջնահերթը մսի և մսամթերքի արտադրության ներուժային ռեսուրսների ռացիոնալ օգտագործմամբ տեղա-

---

[1] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 / Եր.: 2016. – էջ 102, 104
[2] Նույն տեղում, Եր.: 2016. – էջ 102, 104, 350, 354, 2008. - էջ 90, 92, 329, 333
[3] Պարենային ապահովություն և աղքատություն 2006. - էջ 74, 2016. – էջ 75
[4] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 / Եր.: 2016. - էջ 278
[5] Պարենային ապահովություն և աղքատություն 2016թ. հունվ. – դեկ. / Եր.: 2017. – էջ 75

կան արտադրության ամրապնդումն ու ներկրվող մսից կախվածության աստիճանական մեղմացումն է, իսկ ապագայի համար՝ բարձրորակ, էկոլոգիապես մաքուր մսի և մսամթերքի արտահանմամբ միջազգային շուկայում դիրքավորումը:

<u>Հետազոտության նպատակն ու խնդիրները</u>: Հետազոտության հիմնական նպատակը մսի և մսամթերքի արտադրության ասպարեզում ձևավորված հիմնահարցերի, արտադրություն-վերամշակում և արտադրություն-իրացում արժեշղթաների, գյուղատնտեսական կենդանիների շուկայի առաջնային խնդիրների բացահայտումն ու ներուժային ռեսուրսների գնահատման, ՀՀ և Կոտայքի մարզի բնատնտեսական առանձնահատկությունների, ոլորտի առաջնահերթությունների, մսամթերային ենթահամալիրի գլխավոր օղակների շահերի ու հնարավորությունների հաշվառման հենքով լուծման ուղիների մշակումն է: Առաջադրված նպատակի իրագործման համար սահմանված խնդիրների շարքում առավել կարևորվել են.

- մսի արտադրության արդյունավետության վերլուծության ավանդական և նոր մոտեցումների համեմատական առավելությունների գնահատումը, մսի առանձին տեսակների գումարման եղանակի մեթոդաբանական անկատարության հիմնավորումը,
- մսի ինքնաբավության հաշվարկման մեթոդաբանության կատարելագործման անհրաժեշտության հիմնավորումն ու նորովի մոտեցմամբ գնահատումը,
- գյուղատնտեսական կենդանիների վաճառքի շուկայի հիմնախնդրային իրավիճակի ուսումնասիրությունն ու այդ պայմանների բարեփոխման միջոցառումների առաջադրումը,
- միս արտադրող գյուղացիական տնտեսությունների և մսամթերքի արտադրությամբ զբաղվող ձեռնարկությունների թերզարգացած փոխհարաբերությունների պատճառների, առկա արգելքների ու խոչընդոտների բացահայտումը և լուծման մեխանիզմների մշակումը,
- մսի և մսամթերքի արտադրության տնտեսական արդյունավետության և իրացման ուղիների համակողմանի վերլուծությունը, իրացման համակարգի զարգացման և արդյունավետության բարձրացման ուղիների մշակումը:

<u>Հետազոտության օբյեկտը և առարկան</u>: Հետազոտության օբյեկտը ՀՀ ագրոպարենային համակարգի մսամթերային ենթահամալիրում գործառնող և ճյուղի ընդհանուր մթնոլորտը կազմավորող սուբյեկտներն են: Հետազոտության առարկան մսի և մսամթերքի արտադրության և իրացման հիմնախնդիրները, մսի արտադության վրա ներգործող կարևորագույն գործոնները, գյուղատնտեսական կենդանիների շուկայի, միս և մսամթերք արտադրողների միջև փոխհարաբերությունների կարգավորման առանցքային հարցերն են:

<u>Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը</u>: Հետազոտության իրագործման համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասականների, օտարազգի և հայ գիտնականների աշխատությունները, նորամուծական և առաջադիմական գիտական հետազոտությունների նյութերը, մեթոդաբանական ուղենիշներն ու հայեցակետերը:

<u>Հետազոտության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը</u>: Հետազոտությունից բխող գիտամեթոդաբանական և կիրառական արդյունքներում արտացոլված է նրա գիտական նորույթը.

- մշակվել է մսի արտադրությունը չափակցելի կերատարածությունների հաշվով գնահատելու և մսի տարատեսակները պայմանական մեկ տեսակով արտահայտելու մեթոդաբանություն,
- մշակվել է մսի սպառման ֆիզիոլոգիական պահանջարկի հիմքով ինքնաբավության գնահատման մեթոդաբանական նոր մոտեցում,
- մշակվել են մսի և մսամթերքի իրացման ուղիների կատարելագործման, գյուղատնտեսական կենդանիների շուկայի կարգավորման միջոցառումներ և մսի արտադրություն-վերամշակում արժեշղթայում իրացման փոխշահավետ հարաբերությունների կազմակերպատնտեսական կառուցակարգեր,
- բացահայտվել է մսի և մսամթերքի արտադրության և տնտեսական արդյունավետության վրա ներազդող առանցքային գործոնների նշանակալիությունը, մշակվել են միս, մսամթերք արտադրող սուբյեկտների և ոլորտի գերակա շահերին համահունչ արտադրության աճի և տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիներ:

<u>Հետազոտության արդյունքների գիտագործնական նշանակությունը</u>: Աշխատության արդյունքները կարող են օգտագործվել մսի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսությունների, վերջիններիս ու մսամթերք արտադրող ձեռնարկությունների տարաբևեռ շահերի ներդաշնակեցման համար, արտադրողների, ճյուղի հեռահար նպատակների առաջադրման, առաջնահերթությունների վերագնահատման, մսի արտադրության ռազմավարական նպատակների վերաիմաստավորման, ազգային ռեսուրսների պահպանման և ռացիոնալ օգտագործման միջոցառումների ծրագրավորման, ոլորտն ուսումնասիրող գիտնականների, ասպիրանտների և հիմնախնդրով հետաքրքրվող անձանց կողմից:

<u>Հետազոտության արդյունքների փորձարկումն ու հրապարակումները</u>: Ատենախոսությունը քննարկվել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոպարենային համակարգի էկոնոմիկայի, Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման ամբիոնների համատեղ նիստում:

Հետազոտության արդյունքները հրապարկվել են միջազգային և ՀՀ գիտական պարբերականներում, ներկայացվել՝ 2016թ. Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կայացած միջազգային գիտաժողովում: Ատենախոսության հիմնական դրույթներն ամփոփված են հեղինակի չորս գիտական հոդվածներում:

Աշխատությունը բովանդակում է երեք գլուխ, եզրակացություններ, օգտագործված գրականության ցանկ և հավելվածներ: Աշխատանքը շարադրված է 145 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Նախաբանում հիմնավորվել է ուսումնասիրվող թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, տեսական և մեթոդաբանական հիմքերը, աշխատության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը:

Ատենախոսության առաջին՝ «Մսի արտադրության արդյունավետության գնահատման գիտամեթոդաբանական հիմքերը» գլխում ներկայացվել են արդյունավետության էության՝ տնտեսագիտության համաշխարհային դասականների մեկնաբանություններն ու ընդհանրացումները: Մսի արտադրության գիտական հիմքերն ու մեթոդաբանական հայեցակետերը դիտարկվել են ոլորտի յուրահատկությունների և պահանջների հաշվառման համատեքստում:

Մսի արտադրության, մսամթերային ենթահամալիրի էկոնոմիկայի հիմնադրույթների, գիտական հիմունքների, մսացու ցեղերի, դրանց մսային մթերատվության, մսի և մսամթերքի ապրանքագիտական, որակական կարևորագույն հատկանիշների և հիմնահարցերի վերաբերյալ օգտագործվել են օտարազգի և հայ հետազոտողների գիտական հրատարակումները:

Մսի արտադրության ճյուղում նշանակալի ձեռքբերումների, բարձր մթերատու և արաագաճ ցեղերի, նորամուծությունների ներդրման երևույթներն անասնաբուծության գիտական վերելքի արգասիքն են: Անասունների տոհմային և մթերատու հատկանիշների բարեփոխման, մսային նոր ցեղատեսակների բուծման, կենդանիների աճի ու զարգացման կենսաբանական և կենսատեխնոլոգիական նորարարությունների յուրացման, անասունների պահվածքի և խնամքի առաջադիմական չափանիշների արմատավորման, կերակրման ռացիոնալացման ձեռքբերումների շնորհիվ ստեղծվել են լայն հեռանկարներ մսի արտադրության ասպարեզում, ինչն արձանագրվել է ոլորտի առաջա-

վորների նվաճումների ուսումնասիրության միջոցով: Մսային ուղղության անասնաբուծության միջազգային փորձն ակնառու է ճյուղի հարուստ գիտական ժառանգության հիմքի առկայության տեսանկյունով: Ֆրանսիայում, օրինակ, *Շարոլե* ցեղի ցուլիկը ինտենսիվ աճեցման պայմաններում 12 ամսականում հասնում է 525 կգ կենդանի զանգվածի՝ 60-70% սպանդային ելունքով[6]: Իսկ Դանիայում խոզերը 100 կգ քաշի են հասնում 160-165 օրում, միջին օրական քաշաճը կազմում է 630, իսկ ինտենսիվ բտման պայմաններում՝ 868 գրամ[7]: Վկայակոչված թվերը մեծապես գերազանցում են ՀՀ միջին ցուցանիշներին: Այդուհանդերձ, ոլորտի պրոգրեսը կանգ չի առել, որի հիմքը մսային մթերատվության բարձրացման, վարման գիտական համակարգերի կատարելագործման, տարաբնույթ բնակլիմայական պայմաններին լավագույնս հարմարվածության, նոր մեթոդների ներդրման ուղղությամբ գիտական հետազոտություններն են, որոնցում արտացոլվում են նորագույն տեխնոլոգիաներով անասնաշենքերի կառուցման, ձևավորման, միկրոկլիմայական պայմանների, կերակրման արդյունավետ եղանակների, նոր ցեղատեսակների օգտագործման, խաչասերման, մթերատու հատկանիշների բարելավման նորամուծությունները:

Ուսումնասիրությունների կարևոր ոլորտ է հանդիսացել անասունների քաշաճի, արտադրվող մսի քանակի ավելացման և որակի բարելավման նպատակներով կենդանիների կերաբաժինները ցեոլիտներով, պրեմիկսներով համալրելու, հորմոնների, կենսապատրաստուկների օգտագործմամբ անասունների աճի ու զարգացման խթանման նորարարական լուծումների վերաբերյալ գիտական հետազոտությունները: Ներկայացվող նորույթները դիտարկվել են գյուղացիական տնտեսություններում դրանց ինտեգրման և ներդրման կարողությունների, հնարավորությունների դիրքերից:

Անասունների գենետիկական ներուժի օգտագործմամբ քաշաճի բարձր ցուցանիշների ձեռքբերման և մսի արտադրության համար շահեկան հնարավորությունների առումով ծանրակշիռ է արոտային կերերի և արոտների ռացիոնալ օգտագործման նշանակությունը, որն հավաստում են ՀՀ-ում արոտագիրացման ուղղությամբ կատարված Խ.Մ. Սիմոնյանի հետազոտությունները, համաձայն որոնց արոտագիրացման շրջանում տավարի միջին օրական քաշաճը կազմել է 810-1131 գրամ[8]: Այս առումով չափազանց արժեքավոր են ՀՀ բարձր լեռնային արոտների օգտագործման և հարմարվածության *Կովկասյան գորշի* ցեղային հատկությունները: Սակայն մեր կողմից Կոտայքի

---

[6] Родионов Г.В., Изилов Ю.С., Харитонов С.Н., Табакова Л.П., Скотоводство, учебник / М.: КолосС, 2007. – с. 138

[7] Коваленко В.П., Лысых И.Г., Промышленное производство молока и свинины в Дании / Краснодар: Советсакая Кубань, 2005. – с. 58-59

[8] Սիմոնյան Խ., Սիմոնյան Ա., Տավարի մսի արտադրության ավելացման և որակի բարելավման ուղիները ՀՀ-ում / Եր.: Հեղ. հրատ., 2015. – էջ 64

մարզի գյուղական համայնքներում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքներով պարզված է, որ արոտների վիճակով, ջրարբիացման ցածր մակարդակով, օգտագործման գիտական համակարգի բացակայության և այլ պատճառներով բավականաչափ տարբեր են արոտարածեցման շրջանում ձեռքբերված քաշաճի միջին ցուցանիշները, որոնք զգալիորեն զիջում են արևմտյան ստանդարտներին:

<u>Ատենախոսության երկրորդ՝ «Մսի և մսամթերքի արտադրության վիճակը և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում և Կոտայքի մարզում» գլխում</u> մսի և մսամթերքի արտադրության, սպառման, ներկրումների, ռեսուրսապահովվածության և ռեսուրսօգտագործման հիմնահարցերի բազմակողմ վերլուծությունների միջոցով բնութագրվել է մսի և մսամթերքի արտադրության ասպարեզում ձևավորված իրավիճակը և առանցքային խնդիրները: Ներկայացվել են մսամթերային ենթահամալիրի, մսի և մսամթերքի շուկայական կարևորագույն պարամետրերի տեղաշարժերը, զարգացման հիմնախնդիրներն ու գերակայությունները, անասնաբուծության ճյուղի վիճակը, ձեռքբերումներն ու հեռանկարի ուրվագիծը:

2005-2015թթ. մսի համաշխարհային արտադրությունն ավելացել է 19.1%-ով՝ հասնելով 319.2 մլն տոննայի: Անասնաբուծության համաշխարհային համախառն արտադրանքի (1.4 տրլն. ԱՄՆ դոլար) կառուցվածքում 2015թ. միսն ունեցել է 64.5% տեսակարար կշիռ (887.2 մլրդ. ԱՄՆ դոլար)[9,10]: Մսի արտադրության համաշխարհային և տարածքային առանձնահատկությունների ուսումնասիրմամբ բացահայտվել է, որ արտադրության և սպառման անհամաչափության հիմնախնդիրները ընդհանուր են թե՛ գլոբալ և թե՛ լոկալ մակարդակներում, որը պարզորոշ արտացոլում են մսի արտադրության հարաբերական ցուցանիշների նշանակալի մեծ տարբերությունները: Մեկ շնչի և գյուղատնտեսական հողատեսքերի 100 հա-ի հաշվով հաշվով մսի արտադրության ցուցանիշները 2.8 և 6 անգամ տատանվում են ՀՀ առանձին մարզերի միջև: Երևույթի սրությունը միանգամայն համեմատելի է մսի սպառման մակարդակների անհավասարության հետ. եթե Երևանում մեկ շնչի հաշվով մսի միջին տարեկան սպառումը 28.9 կգ է, ապա Տավուշում՝ 15.5:

Մսի արտադրության վիճակի, ծավալների, հաշվեկշռում առանձին տեսակների հարաբերակցության բնութագրերը (աղյուսակ 1) պայմանավորվել են ՀՀ-ում անասնատեսակների քանակական և կառուցվածքային տեղաշարժերով: Խոզերի և թռչունների գլխաքանակի կտրուկ անկման հետևանքով արտադրության հաշվեկշռում խոզի և թռչնամսի մասնաբաժինը նախկինի (1988թ.) համեմատությամբ պակասել է 21.4%-ով:

[9] Food outlook, Biannual report on global food markets / FAO, Rome, 2016. – p. 109-113, 119
[10] Statistical database of FAO, http://www.fao.org/faostat/en/#data/QL

Նախառեֆորմյան շրջանի հետ զուգահեռներ անցկացնելիս արձանագրվել է, որ մսի արտադրությունը 2015թ. 12.8 հազ. տոննայով կամ 12.7%-ով պակաս է 1988թ. նկատմամբ, այդ թվում՝ խոզի մսի արտադրությունը փոքր է 5.7 (32.6%-ով), թռչնի մսինը՝ 22 (3.3 անգամ), իսկ մ.ե.ա. մսինը՝ 3.4 հազ. տոննայով (34.7%-ով)[11,12]:

Աղյուսակ 1

Մսի արտադրության պատկերը և հեռանկարի ուրվագիծը ՀՀ-ում*

Ցուցանիշներ			Փաստացի			Հեռանկարային	
			2005	2010	2015	2020	2025
Մսի արտադրությունը, ընդամենը (հազ. տ)			105	128.4	173.6	228	297.1
100 հա գյուղպիտանի հողերի հաշվով (g)			75.5	75.0	105.0	138.2	180.0
Մսի արտադրություն (կենդանի	խ.ե.ա.	ընդամենը (հազ. տոննա)	59.0	91.3	118.7	151.1	191.8
		100 հա կերահանդակների հաշվով (g)	70.8	74.1	101.2	133.3	170.9
	մ.ե.ա.	ընդամենը (հազ. տոննա)	17.0	15.8	21.3	29.9	43.7
		100 հա կերահանդակների հաշվով (g)	20.4	12.8	18.2	26.4	38.9
	խոզի	ընդամենը (հազ. տոննա)	19.0	12.7	19.6	25.2	34.6
		100 հա վարելահողերի հաշվով (g)	38.4	28.3	43.9	56.6	77.9
	թռչնի	ընդամենը (հազ. տոննա)	10.0	8.6	14.0	21.8	27.0
		100 հա հացահատիկային ցանքերի հաշվով (g)	47.7	53.9	69.6	99.5	120.0

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հետևյալ աղբյուրների տվյալներով՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2006. – էջ 298, 2012. – էջ 290, 2016. – էջ 293, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2007. – էջ 39, 2012. – էջ 42, 2016. – էջ 43, ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025թթ. կայուն զարգացման ռազմավարություն, նախագիծ, էջ 167, 168, 171, 172,

Մսի արտադրության ճյուղում տիրող վիճակի և արդյունավետության հույժ կարևոր չափորոշիչներ են միավոր հողատարածության հաշվով մսի արտադրության ցուցանիշները, որոնք բերված են աղյուսակ 1-ում: Սակայն, խ.ե.ա. և մ.ե.ա. մսի արտադրությունն ըստ բնական կերահանակների ֆիզիկական տարածության հաշվարկելու մեթոդը չի բավարարում մսի արտադրության և կերահանդակների արտադրողականության միջև կապը ռացիոնալ գնահատելու պայմանին: Ուստի, գործող մեթոդաբանության կատարելագործման նկատառումով մեր կողմից առաջարկվել է մսի արտադրութ-

[11] Народное хозяйство Армянской ССР в 1988 году, статистичесий ежегодник / Ер.: Айастан, 1989. – с. 203

[12] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 / Եր.: 2016. – էջ 308

յունն հաշվարկել չափակցելի կերատարածությունների կամ պայմանական վարելահողերի[13] հաշվով:

Աղյուսակ 2

Կոտայքի մարզի մսամթերային ենթահամալիրի հիմնական մի քանի բնութագրեր*

Ցուցանիշներ				Չափի միավոր	2005	2010	2015
Մսի	արտադրությունը (սպանդային քաշով)		ընդամենը	հազ. տ	6	6.5	7.9
			մեկ շնչի հաշվով	կգ	21.8	23.0	31.1
			ՀՀ-ի նկատմամբ	%	125.4	108.2	92.9
			100 գյուղպիտանի հողերի հաշվով	g	60.1	40.2	51.1
			ՀՀ-ի նկատմամբ	%	149.4	99.1	84.2
	սպառումը		մեկ շնչի հաշվով	կգ	21.8	15.7	19.8
			ՀՀ-ի համանուն ցուցանիշի նկատմամբ	%	109.4	74.4	85.2
	համախառն արտադրանքը*		ընդամենը	մլրդ. դ.	12.9	13.9	17.2
		տեսակարար կշիռը	անասնաբուծության համախառն արտադրանքում	%	36.9	44.5	49.3
			գյուղատնտեսության համախառն արտադրանքում		25.8	33.3	32.2
	պահանջը		ըստ 2412 կկալ/օր նորմայի	հազ. տոննա	10.0	10.3	9.3
			ըստ 2838 կկալ/օր նորմայի		20.6	21.2	19.0
	պակասորդը				-14.6	-14.7	-11.1
Սեփական ռեսուրսներով ապահովվածությունը			36.5 կգ նորմայի դեպքում	%	59.7	63.1	85.2
			75 կգ նորմայի դեպքում		29.1	30.7	41.5
Մսամթերքի համախառն արտադրանքը*			ընդամենը	մլրդ. դ.	2.0	3.7	4.5
			ՀՀ մսամթերքի համախառն արտադրանքի նկատմամբ	%	15.0	15.1	14.7

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հետևյալ աղբյուրների տվյալներով՝ ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016. – էջ 43, 288, 2012. – էջ 42, 280, 2007. – էջ 39, 243, սեփական հարցումների, Պարենային ապահովություն և աղքատություն 2006. – էջ 28, 94, 104, 2011. – էջ 26, 89, 100, 2016. – էջ 26, 97, 108, *- համադրելի գներով,

[13] Գրիգորյան Կ.Ա., Պարենային անվտանգության ապահովման և աղքատության նվազեցման հիմնախնդիրների լուծման ուղիները ՀՀ-ում, մենագրություն / Եր.: ՀՊԱՀ, 2011. – էջ 162

Այն հնարավորություն կընձեռի օբյեկտիվորեն գնահատել մսի արտադրության ինտենսիվության, բնական կերահանդակների կերային ռեսուրսների օգտագործման լիարժեքության մակարդակը:

Մսի և մսամթերքի արտադրության ռեսուրսների և նպաստավոր տեղադիրքի շնորհիվ մսամթերային ենթահամալիրը նշանակալից տեղ ունի Կոտայքի մարզի ագրոպարենային համալիրում: Աղյուսակ 2-ում բերված ցուցանիշների հաշվարկներով կարելի է նշել, որ մսի արտադրության համար Կոտայքի մարզի հողային ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բավականին բարձր է: 100 հա գյուղպիտանի հողերի հաշվով 104.7 ց (կենդանի քաշով) մսի արտադրությամբ այն երրորդն է ՀՀ մարզերի շարքում՝ Արմավիրից և Շիրակից հետո: Մսի արտադրության 1.9 հազ. տոննա կամ 31.6% հավելաճով հանդերձ, նրա ներկայիս մակարդակը 2.4 անգամ ցածր է կենսապահովման նորմայով հաշվարկված մսի նկատմամբ մարզի պահանջարկից:

Մսի և մսամթերքի արտադրության ասպարեզում ձևավորած իրավիճակի, համեմատական բնութագրերի, հիմնախնդիրների լուսաբանման պայմանով դիտարկվել են արտադրության դինամիկայի, կառուցվածքի, ռեսուրսապահովվածության, ռեսուրսօգտագործման, մակրոմակարդակում ոլորտի նշանակության հիմնական ցուցանիշները: Մսի արտադրությունից ստացում է անասնաբուծության համախառն արտադրանքի 59.2%-ը ՀՀ-ում և 49.3%-ը՝ Կոտայքի մարզում (աղյուսակ 2): Մսի և մսամթերքի համախառն արտադրանքն ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքում ունի 7.9% տեսակարար կշիռ: ՀՀ ապրանքաշրջանառության կառուցվածքում միսը և մսամթերքն ունեն 4.3%, իսկ պարենային ապրանքների ներկրումների արժեքում՝ 11.5% մասնաբաժին:

Գլխում քննարկվել են մսի արտադրության կերապահովվածության վիճակի, կերային ռեսուրսների առկայության, պահանջի և օգտագործման մակարդակի, բնական կերահանդակների դեգրադացիայի, կերարտադրության դինամիկայի, բաշխվածության, կերային մշակաբույսերի բերքատվության փոփոխության, դաշտային կերարտադրության հնարավորությունների օգտագործման հիմնահարցերը: Կերարտադրության հիմնական ռեզերվը բնական կերահանդակներն են, որոնց կերային ռեսուրսները 2015թ. (շուրջ 15.5 մլն ց կերամիավոր) ունեցել են 63.7% տեսակարար կշիռ ՀՀ կերարտադրության ամբողջական ծավալներում: ՀՀ-ում կերապահանջի և կերօգտագործման հաշվեկշռի գնահատումներով պարզել ենք, որ դեռևս թերօգտագործված են մնում 653.7 հազ. հա (ՀՀ բնական արոտավայրերի տարածության շուրջ 62.1%-ը) արոտավայրի տարեկան կերարտադրությանը համարժեք 6.36 մլն ց կ.մ. արոտային կերեր:

Մսի և մսամթերքի շուկայի հիմնահարցերի հետազոտման համատեքստում կարևորվել են արտաքին կախվածության սպառնալիքի, արտադրված և սպառված մսի

քանակի, էներգետիկայի, սպառողական արժեքի և գնի փոխհարաբերակցության, շուկայի տարողության, մսի միջին մանրածախ և գյուղացիական տնտեսությունների գների դինամիկայի և համահարաբերակցության, ինքնաբավության մակարդակի և դրա գնահատման հարցադրումները:

Աղյուսակ 3

Մսի և մսամթերքի շուկայի կառուցվածքային տեղաշարժերը ՀՀ-ում

№	Ցուցանիշներ			Չափի միավոր	2005	2010	2015
1	Շուկայի տարողությունը			հազ. տոննա	81.4	109.9	142.3
2	Մսի	պահանջարկը, ընդամենը			241.4	244.7	224.9
		առաջարկը, ընդամենը			95.4	129.8	153.7
	որից	արտադրությունը և պահուստները			57.0	70.3	100.7
		ներկրումները			38.4	59.5	52.6
3	Մսամթերքի արտադրությունը				2.6	4.2	6.5
4	Ներկրումներից կախվածությունը			%	41.1	46.3	34.6
	Այդ թվում	տավարի մսի			25	15.7	7.8
		խոզի մսի			43.9	62.8	42.9
		թռչնամսի			81.3	88.5	78.4
		ոչխարի մսի			-	-	-
5	Մսի էներգետիկան, ընդամենը			մլրդ. կկալ	178.2	231.6	287.7
	որից	արտադրված մսինը			114.3	140.8	206.8
		ներկրված մսինը			63.9	90.8	80.9
6	1 կգ մսի էներգետիկան, միջինը			կկալ	1868.3	1784.3	1876.7
	Այդ թվում	արտադրվածինը			2041.6	2026.4	2059.7
		ներկրվածինը			1664.2	1525.6	1538.2

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հետևյալ աղբյուրների տվյալներով՝ Պարենային ապահովություն և աղքատություն 2006. – էջ 72, 2012. – էջ 69, 2016. – էջ 75

2005-2015թթ. տարիներին ՀՀ-ում արտադրվող մսի ծավալն ավելացել է 44.4 հազ. տոննայով (79.3%), իսկ համախառն էներգետիկան՝ 103.2 մլրդ. կկալ-ով: Այդուհանդերձ, շուկայի տարողության 1/3-ից ավելին ձևավորվում է ներկրումների հաշվին: Սեփական պահանջարկը բավարարելու նպատակով ՀՀ ներմուծում է 5.4 հազ. տավա-

րի, 13 հազ. խոզի և 34.2 հազ. տոննա թռչնի միս (2015թ.)[14], ծախսելով 60.6 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթ[15]: Ներկրումներից կախվածության ցուցանիշն ամենաբարձրն է թռչնի մսի շուկայում՝ 78.4% (աղյուսակ 3):

Մսի արտադրության և սպառման լիարժեքության, շուկայի բնութագրության կարևորագույն պարամետրերից է ինքնաբավության մակարդակը, որը սահմանվում է որպես սեփական միջոցների հաշվին տվյալ ապրանքի նկատմամբ երկրի պահանջարկի բավարարման աստիճան[16]: ՀՀ ԱՎԾ-ի կողմից կիրառվող մեթոդաբանությամբ այն հաշվարկվում է արտադրության և արտադրություն+ներմուծում-արտահանում հարաբերությամբ՝ արտահայտած տոկոսներով, որի համաձայն ինքնաբավությունը 2015թ. կազմել է 92.3% տավարի, 57.8% խոզի, 107.7% ոչխարի և այծի, 21.8% թռչնի մսի համար[17]: Սակայն, այս մակարդակները սոսկ բնութագրում են ազգային ռեսուրսների տեսակարար կշիռը մսի համախառն առաջարկում, որտեղ չի արտացոլվում նաև երկրի պահանջարկի մեծությունը: Ուստի նպատակահարմար է համարվել ինքնաբավությունը գնահատել մսի նկատմամբ երկրի բնակչության ֆիզիոլոգիական պահանջարկի հաշվարկի և սեփական ռեսուրսներով նրա բավարարման աստիճանի հիման վրա: Մսի նկատմամբ երկրի բնակչության ֆիզիոլոգիական պահանջարկը կարելի է որոշել մսի սպառման գիտականորեն հիմնավորված ֆիզիոլոգիական նորմայի (75 կգ[18]) և երկրի բնակչության թվաքանակի արտադրյալով: Ինքնաբավության մակարդակը առաջարկվել է հաշվարկել մսի արտադրություն+պահուստներ-արտահանում բաղադրիչի և նորմատիվային պահանջարկի հարաբերությամբ (արտահայտված տոկոսներով): Ըստ այդ մոտեցման՝ 2015թ. ամենաբարձրն է եղել տավարի մսի ինքնաբավության աստիճանը՝ 65.3%, իսկ խոզի, ոչխարի և թռչնի մսի համար կազմել է համապատասխանաբար 41.4, 25.3 և 26.4%:

<u>Ատենախոսության երրորդ՝ «Մսի, մսամթերքի արտադրության զարգացման և տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ մսամթերային ենթահամալիրում (Կոտայքի մարզի օրինակով)» գլխում</u> ներկայացվել են ընտրանքային հետազոտությամբ ստացված նյութերի մշակմամբ, մսամթերային ենթահամալիրի համակողմանի ուսումնասիրության հենքով առաջադրված և հետազոտության խնդիրների լուծումներով պայմանավորված գիտագործնական արդյունքները: Մեծ տեղ է հատկացվել մսի և մսամթերքի իրացման համակարգի կատարելագործման, գյուղա-

[14] Պարենային ապահովություն և աղքատություն 2016թ. հունվ.-դեկ. / Եր.: ՀՀ ԱՎԾ, 2017. – էջ 75
[15] Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2016 / Եր.: 2016. – էջ 446
[16] Պարենային ապահովություն և աղքատություն 2016թ. հունվ.-դեկ. / Եր.: ՀՀ ԱՎԾ, 2017. – էջ 77
[17] Նույն տեղում, էջ 75
[18] Մամիկոնյան Հ.Մ., Սննդարդյունաբերության էկոնոմիկա, (դաս. շարք) / Եր.: ՀԱԱՀ, 2013. – էջ 9

տնտեսական կենդանիների վաճառքի շուկայի հիմնախնդիրների կարգավորման հարցերի լուսաբանմանը:

ՀՀ-ում և Կոտայքի մարզում արտադրվող չորս հիմնական մսատեսակներն ունեն մսի համախառն արտադրանքում տեսակարար կշռի, նոր արդյունքի, զուտ եկամտի մեծության և տնտեսավարող սուբյեկտների գործունեության համար կարևորության միանգամայն տարբեր բնութագրեր: Տնտեսապես նշանակալիորեն մեծ է խ.ե.ա. մսի դերակատարությունը, որին բաժին է ընկնում մսի համախառն արտադրանքի 67.6, արտադրության զուտ եկամտի 63.5 և համախառն եկամտի 68.8%-ը: Կոտայքի մարզի մասշտաբով խ.ե.ա. մսի արտադրությունն ապահովել է շուրջ 4.9 մլրդ. դրամի նոր արդյունք և 2 մլրդ. դրամ զուտ եկամուտ:

Տնտեսական ադյունավետության ցուցանիշների հաշվարկմամբ պարզվել է, որ ամենաշահութաբերն է մսաբուսական պահածոյի արտադրությունը (20.7%), իսկ միավոր արտադրանքի հաշվով ստացվող շահույթի մեծությամբ՝ երշիկինը (374.3 հազ. դրամ/տոննա): Մսամթերքի արտադրության համախառն շահույթում ունեցած 73.3% մասնաբաժնով վերջինս ունի գերակա դիրքեր և աճի ու զարգացման էական հնարավորություններ: Միևնույն ժամանակ, ուսումնասիրությունները փաստում են, որ մսամթերքի արտադրության զարգացման կարևոր ուղի է շուկայի նոր հատվածների ներգրավումը և տեղական հումքի օգտագործումը, որի որակական և էկոլոգիական հատկությունները մրցակցային լուրջ առավելություններ են միջազգային շուկայում առաջշարժի և ճանաչողության համար: Այնինչ, մսամթերքի արտադրության համար Կոտայքի մարզում գրեթե ամբողջապես օգտագործվում է ներկրված հումք: Արտադրություն-վերամշակում արժեշղթայի օղակների միջև կապերի հաստատման հիմնախնդիրն առաջարկվել է լուծել միս և մսամթերք արտադրող սուբյեկտների և սպանդանոցների միջև գործուն և տնտեսապես փոխշահավետ հարաբերությունների կառուցակարգի միջոցով: Անհրաժեշտ կլինի յուրաքանչյուր գյուղական համայնքում ձևավորել իրացումը սպանդանոցին պլանավորող գյուղացիական տվյալներով համալրված տվյալների բազա, ինչն հնարավորություն կընձեռի սպանդանոցին կանոնավոր ձևով կազմակերպել գնումները գյուղացիական տնտեսություններից և պայմանագրային հիմունքներով իրացնել միսը մսամթերք արտադրողներին, ինչպես նաև պետությանը:

Գլխում ամփոփվել են գյուղատնտեսական կենդանիների վաճառքի շուկայի դիտարկումների և նրա հիմնախնդրային իրավիճակի կարգավորմամբ պայմանավորված առաջարկվող միջոցառումներն ու մեխանիզմները, որոնք առնչվում են առևտրում տեղեկատվական ձևերի լայնորեն կիրառման, կազմակերպական աշխատանքների, վերահսկողության և անվտանգության ապահովման լուծումների հետ:

Մսի և մսամթերքի արտադրության արդյունավետության բարձրացման ուղիներն արտադրություն-իրացում արժեշղթայում ինտեգրելու, միս արտադրող գյուղացիական տնտեսությունների համար մրցակցային նախադրյալներ ձևավորելու, մսամթերքի իրացման համակարգերը զարգացնելու և նոր ուղիներ յուրացնելու նպատակով արժեվորվել են մսի և մսամթերքի իրացման համակագերի կատարելագործման ուղիները: Կատարվել են առաջարկություններ արտադրության առաջադիմական ստանդարտների (HAACP) ներդրման, որակի միջազգային հավաստագրերի (ISO, GlobalG.A.P., HALAL,) ձեռքբերման, մսամթերքի թանկարժեք տեսակների արտահանման (օրինակ՝ ջերկի, բուժենինա, ժուժուֆինա, պաշինա, պանսետտա, չորիզո, պանչետտա) և առաջշարժի կազմակերպման, էկոլոգիապես բարձրորակ տեղական հումքով արտադրված մսամթերքով միջազգային շուկայում ներկայանալու և այլ գծերով: Գյուղացիական տընտեսությունների իրացման հնարավորությունների խթանման, միջնորդ օղակների հետ մրցակցային դաշտի համահարթեցման առումով արդյունավետ լուծում է դիտարկվել տեղական շուկաներում վարձակալական հիմունքներով պահպանման կարողություններով ապահովված հատվածի տրամադրումը գյուղացիական տնտեսություններին:

Մսի արտադրության և տնտեսական արդյունավետության ուղիների առաջադրումը կլիներ բավակաչափ բարդ և անիրատեսական, առանց ոլորտում գերակայող տնտեսավարող սուբյեկտների (բնակչության տնտեսությունների, որոնք տալիս են ՀՀ մսի արտադրության 93.1%-ը և ապրանքային արտադրանքի 92.8%-ը[19]), արտադրության արդյունավետության վրա ներազդող առանցքային գործոնների կշռելիության գնահատման: Ուստի Կոտայքի մարզի 5 գյուղական համայնքների 100 գյուղացիական տնտեսություններում մեր կողմից կատարված ընտրանքային հետազոտության արդյունքների խմբավորումներով գնահատվել է մսի արտադրության վրա ներգործող նշանակալի գործոնների ազդեցության բնույթը և խորությունը: Գործոնային վերլուծության մեջ ներառվել են առավել ազդեցիկները՝ ուղղաձիգ գոտիականությունը, կերարտադությունը, անասնագլխաքանակի մեծությունը, արտադրության կենտրոնացումն ու համակենտրոնացումը, մթերատվությունը և արոտօգտագործումը: Ընտրանքային վիճակագրական տվյալների խմբավորումների ընդհանրացման պարագայում կարելի է հավաստել որ,

- մսի արտադրության ծավալների և արդյունավետության բարձրացման հնարավորություններն էապես պայմանավորված են ուղղաձիգ գոտիականությամբ: Կոտայքի մարզի ցածրադիր (<1500 մ) գոտում կերահանդակների 1 հա-ի հաշվով մսի արտադ-

[19] Հայաստանի վիճակագրական տարեգիրք 2016 / Եր.: 2016. – էջ 300, 301

ությունը 0.2 ցենտներով ավելին է բարձրադիրից (> 1700 մ): Սակայն վերջինս ունի էկոլոգիապես մաքուր մսի արտադրության համեմատական առավելություններ:

- մսի արտադրության ավելացման համար հիմնավոր է սեփական կերարտադրության ամրապնդումը և կերային մշակաբույսերի բերքատվության բարձրացումը, քանզի կերային մշակաբույսերի բերքատվության մակարդակի 14.7%-ով բարձրացման պայմաններում կերահանդակների 1 հա-ի հաշվով արտադրվել է 0.2 ց-ով ավելի միս:
- մսի արտադրության նյութատարության ավելացումը փոխհատուցվում է տնտեսական արդյունավետության հավելաճով: Մեկ ց մսի հաշվով նյութական ծախսերի 1% ավելացման դեպքում եկամտաբերությունն աճել է առաջանցիկ տեմպերով՝ 1.8-2.7%-ով, հետևապես մսի արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորություններն իրական են:

Հետազոտված գյուղացիական տնտեսությունների արտադրատնտեսական գործունեության վերլուծությամբ հաստատվել է տնտեսական արդյունավետության բարձրացման համար արտադրության կենտրոնացման և համակենտրոնացման գործոնի մեծ դերակատարումը: Հաշվարկները վկայում են, որ Կոտայքի մարզում մսի արտադրության կառուցվածքում համեմատաբար խոշոր չափեր ունեցող տնտեսավարող սուբյեկտների մասնաբաժնի 1% ավելացման դեպքում ճյուղի միջին եկամտաբերությունը կաճի 1.8-1.9%-ով, մեկ տարվա կտրվածքով մսի արտադրությունից ստացվող ամբողջական զուտ եկամուտը կավելանա 11%-ով կամ 364.9 մլն դրամով՝ հասնելով 3.7 մլրդ.-ի (հաշվի առնելով մսի արտադրության դինամիկան և գնաճի միջին տրենդը), ընդ որում կտնտեսվեն շուրջ 16 մլն դրամի արտադրական ծախսեր:

Մսի արտադրության կազմակերպման առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրություններով բացահայտվել են անասնաբուծության վարման համակարգի, մսի արտադրության և տնտեսական արդյունավետության փոխկապվածություն ու ներազդեցությունը: Արտադրական ծախսերի կառուցվածքում կերերի ծախսի տեսակարար կշռի 1% ավելացման պարագայում եկամտաբերությունը աճել է միջինը 0.7%-ով: Անասունների կերակրման պայմանների ու վիճակի գնահատումներն հավաստում են, որ կերերի քանակական ու որակական բարեփոխման, կերաբաժինների կազմի ու կառուցվածքի օպտիմալացման պայմաններում առկա են քաշաճի և մսի արտադրության ծավալների ավելացման լուրջ հնարավորություններ: Պարզվել է, որ Կոտայքի մարզում 15 հազ. ց խոզի մսի արտադրության վրա ծախսվել է շուրջ 2.4 մլրդ. դրամի կեր, մինչդեռ միայն 1.9 մլրդ. դրամով կարելի էր ձեռք բերել 172 հազ. ց կերամիավոր էներգետիկ համարժեքով 157 հազ. ց գարի, ինչը կբավականացներ շուրջ 30 հազ. ց խոզի քաշաճ ստանալու համար:

Անասունների խնամքի և պահվածքի վիճակի դիտարկումները փաստում են, որ կենսապայմանների բարելավման միջոցառումներն (միկրոկլիմայի, լուսավորվածության, անասնատեսակների զատման ուղղությամբ) առաջնային անհրաժեշտ քայլեր են: Վերարտադրության գործընթացի արդյունավետ անցկացման համար առաջարկվել է գյուղական համայնքներում կազմակերպել մի քանի առանձնացված տարածքներ զուգավորման համար: Հրազդանի տարածաշրջանի և Նաիրիի հյուսիսային հատվածների ռելիեֆի և բնակլիմայական պայմանների նմանության հիմքով նպատակահարմար է համարվել արտադրվող մսի քանակի ավելացման և որակի բարելավման նպատակով կիրառել ՀՀ հյուսիս-արևելյան շրջաններում տարածված խոզերի լեռնանտառային պահվածքի փորձը, որն հնարավորություն է տալիս ստանալ մարմարային միս՝ ցածր ծախսումներով:

Մսի արտադրության աճի և արդյունավետության բարձրացման նպատակով մշակված լուծումները համալիր չէին լինի առանց արոտային գիրացման հնարավորությունների հաշվառման, որը միաժամանակ բարձրորակ մսի արտադրության և արտադրական ծախսերի տնտեսման էական հնարավորություն է: Որպես օրինակ կարելի է նշել, որ հետազոտված տնտեսություններում արոտօգտագործման շրջանում առանց մեծ ջանքերի արձանագրվել են միջին օրական քաշաճի բարձր ցուցանիշներ, որոնք կարող էին լինել ավելին քաշաճի կորուստները նվազագույնի հասցնելու դեպքում ($Ք_կ$ → min): Հետևապես, երրորդ գլխում արտացոլվել են նաև մսի արտադրության և տնտեսական արդյունավետության բարձրացման համար արոտագիրացման և մթերատվության գործոնների նշանակալիության բացահայտման համար մեր կողմից կատարված խմբավորումների (աղյուսակ 4) և ռեգրեսիոն վերլուծության արդյունքները, համաձայն որոնց.

- մսի արտադրության տնտեսական արդյունավետության, արոտարածեցման շրջանի և մթերատվության ցուցանիշների միջև առկա է սերտ կապ՝ կոռելյացիայի (r_{yx}) 0.990 և դետերմինացիայի (R^2) 0.981 գործակցով: Ըստ եռաչափ գծային ռեգրեսիոն մոդելի, արոտային օրերի թվի մեկով ավելացումը նպաստել է տնտեսությունների եկամտաբերության մակարդակի 0.303%, իսկ օրական քաշաճի 10 գրամով ավելացումը՝ 0.18% աճին:
- արոտարածեցման շրջանում ձեռք բերված ընդհանուր քաշաճի և տնտեսությունների եկամտաբերության միջև կառուցված զույգային գծային ռեգրեսիոն մոդելի համաձայն, երևույթների միջև առկա կապի կոռելյացիոն գործակցի (R_{yx}) մեծությունը կազմում է 0.676, իսկ դետերմինացիայինը (R^2)՝ 0.457:

Աղյուսակ 4

Արոտագիրացման և մթերատվության ազդեցությունը մսի արտադրության արդյունավետության վրա 2015թ.*

Գյուղացիական տնտեսությունների խմբերը ըստ արոտային շրջանի տևողության (օր)	Տնտեսությունների թիվը	Մասնաշ և բուսական սնուցիչների գլխի վերաբերյալ խաթարմամբ		Քաշաճը արոտագիրացման շրջանում, ընդամենը, g	Մսի արտադրությունը (g)		Արտադրական ծախսերը (հազ. դրամ)		1 g մսի ինքնարժեքը (հազ. դրամ)	Համախառն եկամուտը (հազ. դրամ)		Զուտ եկամուտը (հազ. դրամ)			Եկամտաբերությունը (%)
		խմբում	մեկ տնտեսությունում		խմբում	1 տնտեսության հաշվով	ընդամենը	մեկ տնտեսությունում		ընդամենը	1 գլխի հաշվով	ընդամենը	1 գլխի հաշվով	1 g մսի հաշվով	
Մինչև 100	20	22	1.1	16.91	24.7	1.23	3948.13	197.41	159.8	2144.92	97.49	744.87	33.8	30.1	18.86
100-120	45	61	1.3	57.45	77.5	1.72	11840.89	263.13	152.7	7251.83	118.88	2884.11	47.3	37.2	24.35
120-ից ավելի	27	29	1.1	31.59	40.6	1.50	5813.14	215.30	143.2	4171.62	143.85	1900.86	65.5	46.8	32.69
Ընդամենը	92	112	-	105.95	142.8	-	21602.16	-	-	13568.4	-	5529.84	-	-	-
Միջինը	-	-	1.2	-	-	1.55	-	234.81	151.3	-	121.15	-	49.4	38.7	25.60

* Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ Կոտայքի մարզի Աղավնաձոր, Լեռնանիստ, Մարմարիկ, Արզական և Ալափարս համայնքների 100 գյուղացիական տնտեսությունների հարցման նյութերով

▪ ընդհանուր քաշաճի մեկ կգ-ով ավելացումը նպաստում է տնտեսությունների եկամտաբերության մակարդակի 0.795% աճին, սակայն նվազող հատույցի պայմանի համաձայն, որոշակի մակարդակից սկսած նրա ադեցությունը աստիճանաբար կորցնում է իր նշանակալիությունը և վերափոխվում հակազդող ուժի:

▪ գյուղացիական տնտեսությունների միջև արոտարածեցման շրջանում արձանագրված քաշաճի միջին ցուցանիշների տարբերությունները (755.6-885.8 գրամ) բնական արոտային բուսականության կենսացիկլի և փարթամության կորի դրսևորման արդյունք են, որը վերահաստատում է արոտների արտադրողականության բարձրացման հիմնախնդրի արդիականությունը:

▪ երրորդ խմբի տնտեսությունները արոտարածեցման շրջանի տևողության երկարաձգման (արոտարածեցման տևողությունը կազմել է 130-150 օր) շնորհիվ ստացել են 0.3 g հավելյալ քաշաճ մեկ գլխի հաշվով՝ արտադրված մսի 11.6% ցածր ինքնարժեքով և 13.8% բարձր եկամտաբերությամբ՝ առաջին խմբի տնտեսությունների նկատմամբ:

Տնտեսական արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշներ են արտադրանքի աշխատատարությունն ու նյութատարությունը: Աշխատատարության ավելացումը գյուղացիական տնտեսություններում այնքան էլ վտանգավոր չէ, քանի որ այն մի կողմից զբաղվածություն է, մյուս կողմից էլ դրա դիմաց կատարված ծախսերն իրականում արտաքին ծախսեր չեն և հանգրվանում են տնտեսությունների համախառն արտադրանքի և համախառն եկամտի մեջ: Տնտեսությունների արտադրատնտեսական ցուցանիշների համահարաբերակցության վերլուծությամբ պարզվել է, որ առաջինից երրորդ խմբերում արտադրանքի նյութատարությունը 0.54-ից իջնում է 0.46-ի (նվազում է 17.4%), իսկ համախառն եկամտինը՝ 1.18-ից 0.85-ի (նվազում է 26%): Հետևապես, արոտարածեցման շրջանի տևողության երկարաձգումը գերխնդիր է, որը պահանջում է համալիր միջոցառումներ:

Ստացված արդյունքների հիմքով կատարել ենք առաջարկություններ՝ արոտներում ծածկապատ հատվածների, էժանագին և դիմացկուն կառույցների ձևավորման, հեռագնա արոտների՝ գիշերակացի տեղերով ապահովման, արոտների ջրարբիացման և բարելավման, գերարածեցման բացառման և զագոնային արածեցման կազմակերպման առնչությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մսի և մսամթերքի արտադրության և տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների հետազոտությամբ ստացված հիմնական արդյունքներով հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Մսի արտադրության էկոնոմիկայի հիմնահարցերի ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ մեթոդաբանորեն թերարժեք է մսի տարատեսակների ֆիզիկական կշիռների գումարման եղանակը, քանզի այդ մոտեցմամբ անտեսվում են մսի առանձին տեսակների սպառողական արժեքների զանազանությունը, դրանց ստացման համար անհրաժեշտ պայմանների, կերածախսի, կերահատուցման անհավասարությունը և էներգետիկ արժեքի էական տարբերությունները: Մսատեսակների ֆիզիկական կշիռների և էներգետիկ որակական հատկությունների համարժեք փոխհարաբերակցությունը և համադրելիությունը ապահովելու նպատակով մեր կողմից առաջարկվել է 2500 կկալ էներգետիկ արժեք ունեցող մեկ կգ խոզի միսն ընդունել որպես մեկ կգ պայմանական միս: Ըստ մսատեսակների էներգետիկ արժեքի՝ տավարի, ոչխարի և թռչնի մսի համար կսահմանվի պայմանական մսի վերահաշվարկման համապատասխանաբար 0.87, 0.56 և 0.42 գործակից:

2. Մսի արտադրության և սպառման լիարժեքության, սեփական ռեսուրսներով ապահովվածությունը բնութագրող կարևորագույն ցուցանիշներից է ինքնաբավության մակարդակը, որն ըստ գործող մեթոդաբանության 2015թ. կազմել է 92.3% տավարի, 57.8% խոզի, 107.7% ոչխարի և 21.8% թռչնի մսի համար, որոնք սակայն, սոսկ բնութագրում են ազգային ռեսուրսների տեսակարար կշիռը մսի համախառն առաջարկում և չեն արտացոլում մսի նկատմամբ երկրի պահանջարկի իրական պատկերը: Ըստ այդմ, նպատակահարմար ենք համարում վերանայել ինքնաբավության հաշվարկման եղանակը՝ հիմքում դնելով մսի նկատմամբ ֆիզիոլոգիական պահանջարկը: Առաջարկվող մոտեցման համաձայն ՀՀ-ում 2015թ. մսի ինքնաբավությունը կազմել է 65.3% տավարի, 41.4% խոզի, 25.3% ոչխարի և 26.4% թռչնի մսի համար (միջինը՝ 44.3%):

3. Մսամթերքի արտադրության տնտեսական արդյունավետության վերլուծության արդյունքներով կարելի է նշել, որ ամենաշահութաբերն է մսաբուսական պահածոյի արտադրությունը (20.7%), որով մեկնաբանվում է վերջին երեք տարիներին դրա արտադրության ծավալների արագացող աճը (շուրջ 5 անգամ): Երշիկի արտադությունն առաջատար է միավոր արտադրանքի հաշվով զուտ շահույթի և համախառն շահույթի մեծությամբ, ինչն ապահովում է արտադրության զարգացման էական հնարավորություններ: Հետազոտություններով պարզվել է, որ մսամթերային արտադրանքի աճի կա-

ռևոր ուղի է շուկայում նոր հատվածների թիրախավորումը, հատկապես՝ էժանագին մսամթերքների սեգմենտի մասով:

4. Մսի և մսամթերքի իրացման համակարգի կատարելագործման, ճյուղում տեղական հումքի օգտագործման համար առաջադրվել են մսի արտադրություն-վերամշակում արժեշղթայի առանցքային օղակների միջև փոխշահավետ հարաբերությունների հաստատման կազմակերպատնտեսական կառուցակարգեր: Մշակվել են հստակ քայլեր, միջոցառումներ և մեխանիզմներ, որոնք կնպաստեն գյուղատնտեսական կենդանիների վաճառքի շուկայի կարգավորմանն ու կայացմանը, միս արտադրողների համար շուկայում մրցակցային համահավասար նախադրյալների ձևավորմանը, մսամթերքի իրացման արդյունավետ նոր ուղիների յուրացմանը, շուկաների ներթափանցմանը:

5. Մսի արտադրության և տնտեսական արդյունավետության մակարդակի համակողմանի հետազոտության հենքով առաջադրվել են արտադրության զարգացման և տնտեսական արդյունավետության բարձրացման ուղիներ և միջոցառումներ: Առաջնահերթ պահանջներ են խնամքի, պահվածքի պայմանների բարելավումը, կենսապահ կերերով անասուններին պահելու պրակտիկայից հրաժարումը, կերաբաժնի կառուցվածքի օպտիմալացումը: Մշակվել է մարզային մասշտաբով անասնաբուժական ծառայություններն արդյունավետ և օպերատիվ կերպով կազմակերպելու մոդել: Գյուղական համայնքների շրջանում վերարտադրության գործընթացը սահուն կերպով անցկացնելու համար առաջարկվել են տնտեսավարողների համար մատչելի քայլեր: Մսի արտադրության ծավալների ընդլայնման հնարավորություն է հանդիսանում խոզերի լեռնատառային պահվածքի փորձի կիրառումը Կոտայքի մարզի Հրազդանի և Նաիրիի տարածաշրջաններում: Բացահայտվել է, որ կերերին հատկացվող միջոցների նպատակային օգտագործումը արտադրվող մսի քանակության ավելացման և արդյունավետության բարձրացման կարևոր ուղի է:

6. Ընտրանքային հետազոտության տվյալների խմբավորումներով գնահատվել են մսի արտադրության և տնտեսական արդյունավետության վրա ազդող գործոնների կշռելիությունը և համահարաբերակցությունը: Արտադրության արդյունավետության և նյութական ծախսերի համադրությամբ բացահայտվել է, որ նյութական ծախսերի հավելաճը փոխհատուցվում է մսի արտադրության եկամտաբերության առաջանցիկ աճով: Միջինացված մակարդակով նյութական ծախսերի 1% հավելաճը նպաստել է եկամտաբերության 1.8% բարձրացմանը: Մսի արտադրության և տնտեսական արդյունավետության փոխկապվածության հաշվարկների արդյունքներով բացահայտել ենք, որ համեմատաբար խոշոր չափերի տնտեսավարող սուբյեկտներն ունեն լուրջ դերակատարու-

թյուն մսի արտադրության տնտեսական արդյունավետության և ճյուղի միջին եկամտաբերության մակարդակի բարձրացման հիմնահարցում:

7. Բարձրորակ մսի արտադրության և տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդրի լուծման գործում ծանրակշիռ է արոտօգտագործման տնտեսական նշանակությունը, որն հաստատվել է ընտրանքային հետազոտությամբ ստացված տվյալների էկոնոմետրիկ վերլուծության արդյունքներով: Համաձայն եռաչափ գծային ռեգրեսիոն մոդելի, արոտային օրերի թվի մեկով ավելացումը նպաստում է տնտեսությունների եկամտաբերության մակարդակի 0.303%, իսկ օրական քաշաճի 10 գրամով ավելացումը՝ 0.18% աճին: Հիմնավորելով արոտարածեցման շրջանի երկարաձգման տնտեսական նպատակահարմարությունը, կատարել ենք առաջարկություններ արոտներում ծածկապատ հատվածների, էժանագին և դիմացկուն կառույցների ձևավորման, հեռագնա արոտների՝ գիշերակացի տեղերով ապահովման առնչությամբ: Կարևորվել են արոտների ջրարբիացումն ու բարելավումը, գերարածեցման բացառման և զագոնային արածեցման կազմակերպումը և այլն:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ամփոփված են ներքոհիշյալ հրապարակումներում.

1. Հովհաննիսյան Ս.Վ., Մսի շուկայի ներկա վիճակը և զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում // ՀՊՏՀ Բանբեր, № 3, Եր.: 2016. – էջ 138-147
2. Hovhannisyan S.V., Development of the selling system of meat and meat products in the RA (by the example of Kotayk marz) [Մսի և մսամթերքի իրացման համակարգի կատարելագործումը ՀՀ-ում (Կոտայքի մարզի օրինակով)] // Bulletin of National Agrarian University of Armenia № 4, Yerevan, 2016. – p. 94 -98
3. Hovhannisyan S.V., Grigoryan K.A., The main problems and features of the global and local meat production (Մսի արտադրության համաշխարհային և տարածքային հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները) // Annals of agrarian science, vol. 14, № 4, Tbilisi, 2016. – p. 315-318
4. Հովհաննիսյան Ս.Վ., Մսի արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները և լուծման ուղիները ՀՀ-ում (Կոտայքի մարզի օրինակով) // ՀՃԱ լրաբեր № 1, Եր.: 2017. – էջ 128 – 132

ОГАННИСЯН САРГИС ВААГНОВИЧ

ПУТИ РЕШЕНИЯ ПРОБЛЕМ ПРОИЗВОДСТВА И ПОВЫШЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ МЯСА И МЯСОПРОДУКТОВ В РА (НА ПРИМЕРЕ КОТАЙКСКОГО МАРЗА)

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности: 08.00.02 – "Экономика и управление хозяйством, его сферами"

Защита диссертации состоится 12-го сентября 2017 года, в 14^{00} часов на заседании Специализированного Совета 002 по экономике ВАК РА, действующего в Национальном аграрном университете Армении, по адресу: 0009, Ереван, ул. Теряна 74.

РЕЗЮМЕ

Мясо и мясопродукты имеют значительную экономическую роль в показателях производства и потребления продовольственных товаров и емкости рынка, макропоказателях страны (в валовой продукции АПК, сельского хозяйства и животноводства, во внутреннем товарообороте, во внешней торговле и т.п.) и критериях уровня жизни (в потребительских расходах, продовольственной и потребительской корзине, в структуре расходов на продовольственные товары, в энергетической структуре потребляемых пищевых продуктах и т.д.).

В дореформенном периоде (1988 г.) объем производства мяса достиг 113.2, а мясопродуктов 28,5 тыс. тонн. Несмотря на убытки, понесенные в ходе приватизации, к 2015г. производство мяса и мясных продуктов достигло 100.4 и 6.5 тыс. тонн соответственно. Если учесть сокращение импорта концентрированных кормов (700-750 тыс. тонн) в республику и полевого кормопроизводства, станет очевидно, что появление независимого землевладельца стало главным фактором развития производства и роста самообеспеченности страны. На современном этапе развитию отрасли препятствуют серьезные проблемы, наиболее весомыми из которых являются: зависимость от внешнего рынка, недостаточность использования производительного потенциала естественных кормовых угодий, низкая эффективность производства крестьянских хозяйств, низкий уровень использования производственных мощностей предприятий мясного подкомплекса и т.д..

Основной целью исследования является выявление проблем в области производства мяса и мясопродуктов, первоочередных вопросов в цепи производство-переработка, производство-реализация и рынка сельскохозяйственных животных, а также разработка путей их решения на основе оценки потенциальных ресурсов, с учетом природно-хозяйственных особенностей РА и Котайкского марза, приоритетов сферы, интересов и возмож-

ностей главных звеньев мясопродуктового подкомплекса. Среди задач, по достижению поставленной цели, наиболее важными являются:

- оценка сравнительных преимуществ традиционных и новых подходов к анализу эффективности производства мяса, обоснование методологического несовершенства способа прибавления разновидностей мяса,
- обоснование необходимости усовершенствования методологии расчета самообеспеченности мясом и оценка с применением нового подхода,
- исследование проблемного состояния рынка сельскохозяйственных животных и предложение мер для улучшения этих условий,
- выявление барьеров, существующих препятствий и причин несовершенных взаимоотношений мясопроизводящих крестьянских хозяйств и предприятий, занимающихся производством мясопродуктов и разработка механизмов решения,
- комплексный анализ экономической эффективности производства мяса и мясных продуктов и путей реализации, разработка путей развития системы реализации и повышения эффективности.

В научно-методологических и практических результатах, исходящих из исследования, отражена ее научная новизна:

- была разработана методология расчета производства мяса по соизмеримым площадям кормовых угодий и переучета разновидностей мяса в один вид,
- был разработан новый методологической подход оценки самообеспеченности мясом на основе физиологического спроса потребления мяса,
- были разработаны меры совершенствования каналов реализации мяса и мясных продуктов и урегулирования рынка сельскохозяйственных животных, а также организационно-экономические механизмы взаимовыгодных отношений реализации мяса в производственно-перерабатывающей цепочке мяса,
- была выявлена значимость ключевых факторов, влияющих на экономическую эффективность и производство мяса и мясопродуктов, были разработаны пути развития и повышения экономической эффективности производства в соответствии с приоритетами сферы и интересами субъектов, производящих мясо и мясопродукты,

Согласно результатам исследования можно обобщать, что:

- возможности развития и роста экономической эффективности производства мяса в значительной степени обусловлены вертикальной зональностью, укреплением собственной базы кормопроизводства, централизацией и концентрацией производства, внедрением научной системы ведения животноводства, сроками пастбищного выпаса животных и т.д.,

- привлечение новых сегментов рынка, позиционирование на международном рынке с мясопродуктами из высококачественного сырья местного производства, внедрение международных передовых стандартов производства (HAACP), приобретение международных сертификатов качества продукции (ISO, Global G.A.P, HALAL), экспорт дорогостоящих видов мясопродуктов и проникновение в новые рынки.

HOVHANNISYAN SARGIS

WAYS TO SOLVE PROBLEMS OF PRODUCTION AND IMPROVEMENT OF ECONOMIC EFFICIENCY OF MEAT AND MEAT PRODUCTS IN RA (BY THE EXAMPLE OF KOTAYK MARZ)

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.02 - "Economics and Management of Economy and Its Spheres"

The defense of the thesis will take place on 12 September 2017, at 14^{00} o'clock, at the meeting of Specialized Council 002 on Economics of SCC RA, operating at National Agrarian University of Armenia by address: 74 Teryan str., Yerevan, 0009.

ABSTARCT

Meat and meat products have a significant economic role in terms of foodstuff production and consumption, market capacity, macroeconomic indicators of the country (gross agricultural production, agriculture and livestock, domestic trade, foreign trade, etc.) and the criteria of living standards (consumer expenditure, the food and consumer basket, the structure of expenditure on food products, the energy structure of food consumed, etc.).

In the pre-reform period (1988), the volume of meat production reached 113.2, and meat products to 28.5 thousand tons. Despite the losses incurred in the course of privatization, by 2015, the production of meat and meat products has reached 100.4 and 6.5 thousand tons, respectively. Taking into consideration the reduction in the republic of imports of concentrated fodder (700-750 thousand tons) and the field fodder production, it becomes obvious, that the appearance of an independent landowner has become a major factor in the development of production and growth in the self-sufficiency of the country. At the present stage, serious problems hinder the development of the branch, the most noteworthy of which are: the dependence on the external market, inadequate use of the productive capacity of natural fodder lands, low efficiency of production of peasant farms, insufficient utilization of enterprises' production capacity of meat subcomplex etc.

The main aim of the study is to identify the problems in the field of meat and meat products production, the priority issues of farm animal market and chains of production-processing, production-selling and development of their solutions, based on the assessment of potential resources, taking into account the natural-economic features of the RA and Kotayk marz, interests and also the possibilities of the main units of the meat-producing subcomplex. Among the tasks to achieve the goal, the following were the most essential:

- an assessment of the comparative advantages of traditional and new approaches to the analysis of the efficiency of meat production, the substantiation of the methodological imperfection of the method of adding meat varieties,
- substantiation of the necessity to improve the methodology for calculating meat self-sufficiency and evaluation with a new approach,

- research of problematic state of the farm animals market and proposing measures for improvement of these conditions,
- identification of barriers, existing obstacles and the causes of undeveloped relationships between the meat producing peasant farms and enterprises, engaged in the production of meat products, and development of the solution mechanisms,
- a comprehensive analysis of the economic efficiency of meat and meat products production and ways of marketing, development of ways to improve the sales system and increase of efficiency.

The scientific-methodological and practical results proceeding from the research reflect its scientific novelty:

- a methodology was developed for calculating the production of meat by the commensurable areas of pastures and transforming varieties of meat into one type,
- a new methodological approach was developed for assessing meat self-sufficiency based on the physiological demand of meat consumption,
- measures have been developed to improve the channels for the sale of meat and meat products and the regulation of the market for farm animals, as well as the organizational and economic mechanisms for mutually profitable sales of meat in the producing and processing chain of meat,
- the importance of key factors influencing the economic efficiency and production of meat and meat products was revealed, ways of development and increasing the economic efficiency of production were developed in accordance with the priorities of the sphere and the interests of the entities producing meat and meat products.

With the results of the study, we can summarize that:

- the opportunities for the development and growth of the economic efficiency of meat production are mainly caused vertical zoning, the strengthening of their own base of fodder production, the centralization and concentration of production, the introduction of a scientific system for cattle breeding, the duration of pasture grazing etc.,

- attraction of new market segments, positioning on the international market with meat products made from high-quality raw materials of local production, introduction of international advanced production standards (HAACP), acquisition of international certificates of product quality (ISO, GlobalG.A.P, HALAL), export of expensive meat products and penetration into new markets.